ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 մարտի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

36
(2886)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՒՐԻՇՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՆ, ՄԵՆՔ՝ ԱՉՔԱԹՈՂ ԱՆՈՒՄ



Լուսանկարները՝ ArmLur.am կայքում



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
1 ময. ·

#ՕրվաԾնունդ #ԿարենԴուրգարյան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանն այցելել է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի և իր անունից շնորհավորելու տնօրենին՝ ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Դուրգարյանին, 55-ամյա հոբելյանի կապակցությամբ:

«Դուք՝ որպես մեր ամենակարևոր մշակութային կոթողի՝ Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի ղեկավար, Ձեր գործունեությամբ նոր շունչ ու կենսականություն եք բերել թատրոն: Անգնահատելի են Ձեր ջանքերը ինչպես մեր հանրությանը հասանելի դարձնելու համաշխարհային արվեստի գոհարները, այնպես էլ միջազգային բազմաթիվ բեմերում հայ օպերային արվեստը ճանաչելի դարձնելու, հանրահռչակելու գործում»,- նշել է Դանիել Դանիելյանը՝ մաեստրոյին մաղթելով ստեղծագործական անսպառ եռանդ և բազում նվաճումներ, նոր ու ինքնատիպ ներկայացումներ:

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն Կարեն Դուրգարյանը շնորհակալություն է հայտնել գնահատանքի համար և իր հերթին բոլորին մաղթել սեր և խաղաղություն:

Մարտի 9-ին օլիմպիական չեմպիոն Արմեն Նազարյանի 50-ամյակն է եղել, որը, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների, նշել են Բուլղարիայում:

Հիշեցնենք, որ Արմեն Նազարյանը Օլիմպիական խաղերի, աշխարհի ու Եվրոպայի բազմակի չեմպիոն է:

Նազարյանի 50-ամյակի միջոցառմանը ներկա են եղել աշխարհի բազմակի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը, դուդուկահար Կամո Սեյրանյանը եւ այլ հայտնիներ:

Նազարյանին շնորհավորական ուղերձ է հղել նաեւ Բուլղարիայի նախագահ Ռումեն Ռադեւը, նաեւ Բուլղարիայի սպորտի նախարարությունը:

Մարզիկին մեծարել են Բուլղարիայում, սակայն որեւէ շնորհավորական ուղերձ կամ գնահատանքի խոսքեր ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից, Կառավարությունից, նախագահի նստավայրից կամ Ազգային Ժողովից չի հնչել: Ինչպես միշտ, սեփական եւ իրական հերոսին աչքաթող են անում եւ հերոս համարում են հարկատու քաղաքացուն:

Չնայած այս ամենին՝ հիշեցնենք, որ երբ Նիկոլ Փաշինյանը եկավ իշխանության, համարեց, որ Օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն, Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի վեցակի, աշխարհի եռակի չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ Արմեն Նազարյանը բավականաչափ գնահատված չի եղել, եւ նրան պարգեւատրեցին հայրենիքին մատուցած ծառայությունների համար Առաջին աստիճանի շքանշանով:

Ստացվում է, որ ներկայիս իշխանությունները մարդուն, որը մեծ ավանդ եւ վաստակ ունի սպորտի կայացման հիմքում, արհամարհում են, իսկ մեկ այլ երկրում մեծարվում են Օլիմպոսի աստվածների պես:



ՀՀ ԱԺ ՔՊ պատգամավոր Արփի Դավոյանը, Ալխաս Ղազարյանը ծանուցում են ստացել Երեւան քաղաքի դատարանից, որ ներկայանան դատարան՝ հարցաքննության: Նրանք ներկայացել ու հարցաքննվել են: Հիշեցնենք, որ 2023 թվականի մարտի 31-ին «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանը Պետահիրավական հարցերով մշտական հանձնաժողովի նիստում պատասխանել էր ամբարտավան պահվածք դրսեւորած հանձնաժողովի նախագահին, որը պարծեցել էր, թե՝ ոնց ուզեմ, կխոսեմ, ապա բռունցքով հարվածել ՔՊ պատգամավորի ձախ հոնքին: Քրեական գործը 2023 թվականի ապրիլի 25-ին մտել է դատարան, եւ Միեր Սամվելի Սահակյանին մեղադրանք է առաջադրվել: Դատաքննությունը դեռ շարունակվում է:

Դերթական հայցը կներկայացվի դատարան՝ ընդդեմ Երեւանի ավագանու: Այս անգամ կվիճարկվի Հայկ Մարությանին մանդատից զրկելու որոշումը: Այսպիսով, դեռ փետրվարի 7-ի նիստում, Երեւանի ավագանու որոշմամբ, ընդդիմադիր 3 անդամ՝ «Մայր Հայաստան» խմբակցությունից Սոնա Աղեկյանը եւ Նարինե Հայրապետյանը, իսկ «Ազգային առաջընթաց»-ից՝ Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը, զրկվեցին մանդատներից: Ավագանու որոշման հիմքում անհարգելի բացականերն էին եւ նախագծերի քվեարկություններին չմասնակցելը, որոնք եղել են բացառապես քաղաքական նպատակներով: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցությունը պատրաստվում է հայց ներկայացնել՝ ընդդեմ այս որոշման, եւ վիճարկել Հայկ Մարությանին մանդատից զրկելու հարցը: «Ավագանու անդամին մանդատից զրկելն ապօրինություն է, զոռբայություն: Մենք վիճարկելու ենք սա. երբ հարցը ներկայացնենք, կհայտարարենք այդ մասին»,-մեզ հետ զրույցում ասաց խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը: Ավելի վաղ հայտնել էինք, որ «Մայր Հայաստան»-ը եւս հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ ընդդեմ ավագանու անդամներին մանդատից զրկելու որոշման:



ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2024 թվականի հունվար ամսվա կտրվածքով հիմնական ժողովրդագրական ցուցանիշներն ամփոփվել են շտապ եղանակով, եւ ստորեւ ներկայացվում են բնակչության բնական շարժի եւ ՍԷԿՏ համակարգով ստացված սահմանային գրանցումների վերաբերյալ նախնական տվյալները: 2024 թվականի հունվարին կենսունակության գործակիցը՝ ծնվածների եւ մահացածների հարաբերակցությունը, կազմել է 120.9%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում արձանագրված 139.5%-ի համեմատ: Այսինքն՝ ստացվում է, որ նախորդ տարի նույն ժամանակահատվածում ծնելիության մակարդակն ավելի ակտիվ էր, քան այս տարի նույն ժամանակահատվածում: Նախորդ տարի այս ժամանակահատվածում ծնվել է 3481 մարդ, այս տարի հունվարին՝ 3108, նախորդ տարվա համեմատ՝ 373 մարդով պակաս: Սակայն նշենք, որ վերջին 4 տարիների հունվար ամիսների ընթացքում ծնելիության բարձր մակարդակը եղել է 2023 թվականի հունվարին՝ 3481 մարդ, իսկ 2022 թվականին՝ 2868 մարդ, 2021 թվականին՝ 2853 մարդ: 2024 թվականի հունվարին ծնվել է 3108 մարդ եւ մահացել 2571 մարդ:

ԶՐՈՒՅՑ

«ԱՅՍ ԽՈՒՆՏԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՆՁՆԵԼ»

ԱԺ «Հայաստան» խմբակցության դատգամավոր Գառնիկ Դանիելյանը, որը նոր է վերադարձել Տավուշի մարզից, ArmLur.am-ի հետ զրույցում մանրամասներ է ներկայացրել, թե ինչ իրավիճակ է այնտեղ, որ գյուղերն են թշնամու թիրախում հայտնվել:

-Պարոն Դանիելյան, վերջին շրջանում անընդհատ խոսակցություններ են շրջանառվում, հասարակության շրջանում անհանգստություններ կան, որ առաջիկայում իշխանությունները պատրաստվում են Ադրբեջանին Տավուշից գյուղեր հանձնել: Իշխանությունները սա չեն հերքում, ավելին՝ ասում են, որ այն գյուղերը, որ Ադրբեջանը մեզանից պահանջում է, Հայաստանի սուվերեն տարածքում չեն եղել: Դուք գնացել եք Տավուշ, ինչ իրավիճակ էր հանրության շրջանում:

-Նախ՝ մի քիչ պատմությունից էքսկուրս կատարենք. ի՞նչ եղավ 2020 թվականից հետո. նոյեմբերի 9-ի հուշագրի մեջ կար դրույթ, որ չակերտավոր Ղազախի շրջանի գյուղեր պետք է հետ վերադարձնեն Ադրբեջանին, հետո հանվեց այդ դրույթը, բայց խոսակցությունները չէին դադարում: Ես իմ ընկերների հետ մի քանի անգամ ճանապարհներ ենք փակել, պարզաբանումներ ենք պահանջել մարզպետից, մարզպետն ասաց՝ նման բան չկա, դրանք սուտ խոսակցություններ են: Այսինքն՝ բոլոր մակարդակներով սուտ էր քարոզվում, այնինչ իրական դաշտում մենք տեսնում ենք, որ պրոցեսներ են գնում: Այդ պրոցեսները հասան իրենց կուլմինացիային, երբ Շահին Մուսաֆաեւը հայտարարեց, որ պահանջներ են ներկայացվել հայկական կողմին անհապաղ չորս գյուղերը հետ վերադարձնել:

-Ո՞ր գյուղերի մասին է խոսքը:

-Դրանք Բաղանիս-Այրում գյուղն է, Ներքին Ոսկեպարի հատվածն է, դա Ղըզըլհաճի կոչվող գյուղն է, ուր ժամանակին ադրբեջանցիներ են բնակվել, եւ Կիրանց գյուղի մոտակա բնակավայրն է: Այդ չորս գյուղերը պետք է անհապաղ հայկական կողմը հետ վերադարձնի: Հայկական կողմն ի՞նչ ասաց. հայկական կողմն ասաց, որ մենք պահանջել ենք Ադրբեջանից 31 բնակավայրերի հետվերադարձը: Ադրբեջանն ասաց՝ անգամ մտքներովդ չանցնի, որ այդ 31-ից որեւէ մեկը ես պատրաստվում եմ ձեզ վերադարձնել, բայց դուք պետք է ինձ վերադարձնեք: Այնուհետեւ տեղի ունեցավ Նիկոլ Փաշինյանի ասուլիսը, ասուլիսում նորից մանիպուլացիայի ենթարկեց հանրությանը:

-Ի դեպ, ասուլիսում Նիկոլ Փաշինյանը շեշտեց, որ այն գյուղերը, որոնք մեզանից պահանջում են, ՀՀ տարածքում չեն եղել:

-Հենց մանիպուլացիան էլ դա է. ի՞նչ է ասում վարչապետի աթոռը զբաղեցնողը. ասում է՝ ճիշտ է, կոմունիկացիաները այդտեղով են անցնում, ճանապարհներն այդտեղով են անցնում, գազամուղն այդտեղով է անցնում, դրանք ռազմավարական նշանակության բարձունքներ են, բայց դա Հայաստան չէ: Այսինքն՝ մի խայտառակ սուտ է ասում, երբ ասում է՝ Հայաստան չէ: Ես մի փաստ միայն նշեմ. այդ տարածքներում 8-րդ դարի հայկական եկեղեցի է վեր խոյանում Ոսկեպարի հատվածում: Ինչի՞ համար է սա ասվում. սա ասվում է, որպեսզի հանրությանը մոլորության մեջ գցի եւ հանձնումը պայմանավորի նրանով, որ սա Տավուշի մարզ չէ, ինքը Տավուշի մարզից հող չի տալիս, սա Ադրբեջան է: Այսինքն՝ մի օր էլ այս խունտան Հայաստանը կարող է համարել Ադրբեջանի մաս եւ ամբողջությամբ հանձնել: Մենք ինչո՞վ պետք է առաջնորդվենք՝ Ադրբեջանի նարատիվներո՞վ... դե եթե Ադրբեջանի պահանջները պիտի բավարարես, պետք է ամբողջ Հայաստանը տաս, ոնց որ տվեցիր Արցախը, որնցոր տվեցիր Գորիս-Կապան ճանապարհը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՌԴ-Ն ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

ԹԱՔՆՎԵԼՈՎ ԿԵՂԾ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՈՒՄ

Մարիա Զախարովան մեկնաբանել է Ֆրանսիայի եւ Հայաստանի միջեւ շփումների ակտիվացման հարցը՝ Ռուսաստանի վերաբերյալ Հայաստանի իշխանությունների վերջին որոշումների ֆոնին:

«Ինչ վերաբերում է Փարիզի եւ Երեւանի շփումներին, ուզում եմ ընդգծել, որ արտաքին գործընկերների, ազգային անվտանգության ապահովման պարամետրերի ընտրությունը ցանկացած երկրի ինքնիշխան գործն է, եւ մենք դա եւս մեկ անգամ վերահաստատում ենք: Պարզապես տպավորություն է ստեղծվում, որ Երեւանը, շրջվելով դեպի Ֆրանսիա եւ նրա հետ զարգացնելով ռազմատեխնիկական համագործակցություն, չի գիտակցում ֆրանսիացի «հովանավորների» իրական մտադրությունները, տարածաշրջանում նրանց ռազմական ներկայության ընդլայնման ռիսկերը:

Միամտաբար կարծում են, որ Ֆրանսիան պատրաստ է կամ ի վիճակի է ապահովել Հայաստանի անվտանգությունը: Եթե Ֆրանսիան նման հնարավորություններ ունենար, ապա դրանք կկիրառեր այն երկրներում, որտեղ պայմանագրային պարտավորություններ ուներ, քանի որ դրա համար վճարվում էր: Աֆրիկյան մայրցամաքի երկրներում Փարիզի առաքելությունները ձախողվեցին, քանի որ Ֆրանսիան թողեց իր դաշնակիցներին եւ գործընկերներին ամենակրիտիկական պահին»,-ասել է Զախարովան:

Նրա խոսքով՝ «թաքնվելով համերաշխության կեղծ հավաստիացումների եւ խաղաղության մասին խոսքերի հետեւում՝ Ֆրանսիայի ներկայիս իշխանությունները չեն առաջնորդվում Հայաստանի եւ հայ ժողովրդի շահերով»:

«Իրականում Ֆրանսիայի ներկայությունը տարածաշրջանում տեղեկություններ հավաքելու, տարածաշրջանի պետություններին վերահսկելու եւ երկրների միջեւ ձեռք բերված բոլոր խաղաղության համաձայնագրերի իրականացումը թույլ չտալու փորձ է: Սա ակնհայտ է: Եթե Ֆրանսիայի նպատակը լինեին խաղաղությունն ու անվտանգությունը, ապա նա ամեն ինչ կաներ, որպեսզի 2021 թվականից Ռուսաստանի միջնորդությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչվեին, մինչդեռ նրանք հակառակ կուրսն են վերցրել»,- եզրակացրել է ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը:

ՖՐԱՆՍԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան կժամանի Ֆրանսիայի Ազգային ժողովի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Անն-Լորանս Պետելի գլխավորած պատվիրակությունը:

Այս մասին ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը կարգադրություն է ստորագրել, որում ասված է.

«Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով՝ կարգադրում եմ.

1.Կազմակերպել 2024 թվականի մարտի 24-27-ը Հայաստանի Հանրապետություն ժամանող՝ Ֆրանսիայի Ազգային ժողովի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Անն-Լորանս Պետելի գլխավորած պատվիրակության ընդունելությունը:

2.Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանին՝ ընդունել պատվիրակությանը:

3.Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դ. Առաքելյանին՝ պատվիրակության ընդունելությունը կազմակերպել Ազգային ժողովի նախագահի 2018 թվականի հունվարի 25-ի «Ներկայացուցչական ծախսերի իրականացման եւ հուշանվերների տրամադրման կարգի մասին» Կ-22-Ա կարգադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին»:

ԱՄՈՒՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՄԲ

Հայաստանը դիտարկում է ԵՄ-ի հետ գործընկերության հետագա խորացման հեռանկարները՝ ժողովրդավարության ամուր հանձնառությամբ, տարածաշրջանում կայուն խաղաղության զարգացմամբ եւ կառուցմամբ:

Այս մասին X-ի իր միկրոբլոգում գրել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը՝ ողջունելով մարտի 13-ին ԵԽ-ի ընդունած բանաձեւը:

«Ողջունելով բանաձեւի ընդունումը՝ նման ճնշող մեծամասնությամբ, եւ ավելի սերտ կապերի, հայ-ադրբեջանական խաղաղության պայմանագրի անհրաժեշտության մասին հստակ ազդակները՝ մենք դիտարկում ենք մեր գործընկերության հետագա խորացման հեռանկարները՝ ժողովրդավարության ամուր հանձնառությամբ, տարածաշրջանում տեւական խաղաղության զարգացմամբ եւ կառուցմամբ»,- նշված է գրառման մեջ:

Եվրախորհրդարանի լիագումար նիստին ներկայացված ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ կապերի սերտեցման, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության համաձայնագրի անհրաժեշտության վերաբերյալ բանաձեւը մարտի 14-ին ընդունվել է 504 կողմ, 4 դեմ, 32 ձեռնպահ քվեով:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հայաստանյան առաքելության ղեկավար Իվա Պետրովային:

ՀՀ կառավարության լրատվական ծառայությունից հայտնում են, որ վարչապետը կարեւորել է ԱՄՀ-ի հետ համագործակցությունը՝ի նպաստ մեր երկրում տնտեսության զարգացմանն ու կայունության պահպանման:

Զրուցակիցները քննարկել են բարեփոխումները՝ հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականությունների, ֆինանսական ոլորտի, ներդրումային միջավայրի բարելավման ուղղություններով:

Ընդգծվել է 2023 թվականի արդյունքներով Հայաստանում գրանցված մակրոտնտեսական դրական ցուցանիշների փաստը եւ կարեւորվել բարեփոխումների շարունակականությունը՝ տնտեսական ակտիվության պահպանման նպատակով: Վարչապետը շեշտել է, որ ՀՀ կառավարության համար մակրոտնտեսական կայունության պահպանումը բացարձակ առաջնահերթություն է, եւ այդ ուղղությամբ քայլերն ու բարեփոխումները կրելու են հետեւողական բնույթ:

Անդրադարձ է կատարվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հումանիտար խնդիրներին եւ դրանց լուծմանն ուղղված քայլերին: Այդ համատեքստում վարչապետը շեշտել է միջազգային հանրության օժանդակության շարունակականության կարեւորությունը:

ՀՈՒՅՍ Է ՀԱՅՏՆԵԼ

Մեծ Բրիտանիայի վարչապետ Ռիշի Սունակը՝ Բաքվի XI գլոբալ ֆորումի մասնակիցներին ուղղված նամակում հույս է հայտնել, որ մինչեւ այս տարվա նոյեմբեր ամիսը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կստորագրվի խաղաղության պայմանագիր:

Այս մասին հայտնում են ադրբեջանական ՋԼՄ-ները:

Մեծ Բրիտանիայի վարչապետի կարծիքով՝ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հակամարտությանը վերջ դնելու պատմական հնարավորություն է ստեղծվել:

«Ներկայումս Հայաստանի հետ երկարամյա հակամարտությանը վերջ դնելու պատմական հնարավորություն կա: Կարեւոր իրադարձություն կլիներ հասնել դրան մինչեւ COP 29-ը (ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության կոնֆերանս)»,- նշվում է Սունակի նամակում:

2024 թվականի նոյեմբերին Բաքվում տեղի կունենա Միավորված ազգերի կազմակերպության կլիմայի փոփոխության մասին կոնֆերանսը:

ՈՂՋՈՒՆԵԼ Է ԲԱՆԱՁԵՎԸ

«ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ ՄԻԱՅՆ ԵՎՐՈՊԱՆ Է»

«Դեպի Եվրոպա գնացող Հայաստանի վրա հարձակվելը անհամեմատ ծանր ու բարդ է լինելու Ռուսաստանի եւ Ադրբեջանի համար: Իրենք ասում են՝ հարձակվում են այն Հայաստանի վրա, որն իրենցից 90-ականներին տարածք է խլել, իսկ հիմա հարձակվելու են դեպի Եվրոպա գնացող Հայաստանի վրա, այսինքն՝ հարձակվելու են քաղաքակիրթ աշխարհի վրա»,- երեկ հայտարարել է «Հանրապետություն» կուսակցության ղեկավար Արամ Սարգսյանը:

Արամ Սարգսյանը ողջունել է ԵՄ բանաձեւը եւ նշել, որ սա այն եզակի դեպքերից է, որը կարող է Հայաստանի Հանրապետությանը՝ որպես պետության, դուրս բերել այն իրավիճակներից, ինչի մեջ գտնվում ենք 2020-ից առ այսօր:

«Մենք դեռ 2023-ին մի փաստաթուղթ էինք ստորագրել, որտեղ ասում էինք՝ եթե ՀՀ իշխանությունը գնա դեպի ԵՄ ինտեգրման ճանապարհով, մենք կօժանդակենք եւ կաջակցենք, իսկ եթե չգնան, մենք կլինենք ամենախիստ քննադատը: Բարեբախտաբար, որոշակի հույսեր են առաջանում, որ մենք պետք է աջակցենք, ոչ թե քննադատենք:

Ես գտնում եմ, որ անվտանգային խնդիրները տարածաշրջանում միանշանակ սրվել էին մանավանդ վերջին օրերին, եւ բոլորդ դա զգում էինք, եւ սա նաեւ անվտանգային տվյալ խնդրի լուծման բանալիներից մեկն էր, ինչը Եվրոպան շատ արագ կազմակերպեց:

Իհարկե, յուրաքանչյուր պետության անվտանգության համար մեկ երաշխիքը բանակն է, եւ մենք պետք է բանակ-պետություն հասկացությունը գերկարեւորենք: Մենք, բացի 60.000 զինվորական ունենալուց, երկու այդքան էլ պետք է ունենանք պահեստազորում, ու դրա հիմքերը պետք է հիմա դնենք:

Բայց էսօրվա ռազմաքաղաքական բալանսի պարագայում գերկարեւոր է արտաքին քաղաքական աջակցությունը: Մենք գտնում ենք, որ դեպի Եվրոպա գնացող Հայաստանի վրա հարձակվելը անհամեմատ ծանր ու բարդ է լինելու ՌԴ-ի ու Ադրբեջանի համար, հակառակ պարագայում իրենք ասում են՝ հարձակվում են այն Հայաստանի վրա, որն իրենցից 90-ականներին տարածք է խլել, իսկ հիմա հարձակվելու են դեպի Եվրոպա գնացող Հայաստանի վրա, այսինքն՝ հարձակվելու են քաղաքակիրթ աշխարհի վրա:

Եվրոպան ճանաչում է ՀՀ սահմանները, ԵՄ դիտորդները այստեղ խաղաղության լուրջ հնարավորություն տվեցին, եւ սահմանին լուրջ միջադեպեր չեղան, իսկ մեր ռազմավարական գործընկերն այդպես էլ չճանաչեց մեր սահմանները:

Այն, ինչ ասում էր այսօր վարչապետը, էդտեղ քննարկելու հարց նույնիսկ չկա: Մեզ գործընկերներ են պետք մեր այսօրվա իրավիճակում խնդիրներն ավելի լայն քննարկելու կամ արտաքին քաղաքական դաշտ մտցնելու համար, եւ այդ առումով մեր գործընկերը միայն Եվրոպան է:

Մեր ռազմավարական գործընկերը մեր սահմանները չի ճանաչել, չի ճանաչում, հետեւաբար մեր ուղին դեպի Եվրոպան է: Եվրոպան էլ երեկ իր ընդունած որոշմամբ ցույց տվեց, որ մեր կողքին է»,-ասել է Սարգսյանը:

Նշենք, որ Եվրախորհրդարանը մարտի 13-ին ընդունել է բանաձեւ, որով առաջարկվում է Հայաստանին ԵՄ անդամակցության թեկնածուի կարգավիճակ տալու հնարավորություն տալ:

Այն ընդունվել է ձայների 504 կողմ, 4 դեմ եւ 32 ձեռնպահ հարաբերակցությամբ:

Բանաձեւով նաեւ ԵՄ կառույցներին կոչ է արվում աջակցել Հայաստանի հետ գործակցության ընդլայնմանը ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական երկխոսության, անվտանգության եւ այլ ոլորտներում: Բանաձեւի նախագծում նշվում է, որ Ադրբեջանը չի կարող համարվել Եվրամիության վստահելի գործընկեր՝ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղում իրականացրած էթնիկ զտումները:

Բանաձեւում մեջբերվել է ՀՀ վարչապետի՝ ավելի վաղ The Telegraph-ին տված հարցազրույցում արած հայտարարությունն առ այն, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է Եվրամիության հետ լինել այնքան մոտիկ, ինչքան ԵՄ-ն դա հնարավոր կհամարի:

ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն էլ ասել էր գրեթե նույն միտքը Հայաստան այցելած Էստոնիայի ԱԳ նախարարի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 182

2018 թվականի մայիսի 8-ին՝ Երեւանի Հանրապետության հրապարակում կայացած հանրահավաքի ժամանակ, արդեն վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Կաթիլային ոռոգումը պետք է դառնա համատարած երեւույթ, ինչը հնարավորություն կտա ջրի ահռելի խնայողություններ անել»: Այս խոստումից անցել է հինգուկես տարի: Նիկոլ Փաշինյանը նախորդ տարի հայտարարեց. «Հայաստանում արդեն կա ջրի ճգնաժամ, որն ահագնանում է նաեւ ենթակառուցվածքների բացակայությամբ կամ մաշվածությամբ, նաեւ ջրի նկատմամբ մեր ունեցած վերաբերմունքով: Եկեք խոստովանենք՝ այսօր ՀՀ-ում ջուրը չի կառավարվում, ջուրն ուղղակի հոսում է»: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ Հայաստանում չկա որեւէ հրապարակված ցուցանիշ, թե կաթիլային ոռոգման տարածվածությունը որքան է ավելացել Փաշինյանի օրոք: Գյուղացիները պնդում են, որ այդ համակարգին անցնելը թանկ է անգամ վարկերով կազմակերպելու համար եւ չի տարածվում:

ՌՈՒՍ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

Ռուսաստանի Դաշնության փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինն Անկարայում թուրք գործընկերոջ՝ Բուրաք Աքչափարի հետ ունեցած խորհրդակցությունների ընթացքում քննարկել է նաեւ Անդրկովկասում տիրող իրավիճակը, մասնավորապես՝ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացը:

Այս մասին հայտնում է ՌԴ ԱԳՆ-ի պաշտոնական կայքը:

Կողմերը ներկայացրել են Հարավային Կովկասում իրադրության վերաբերյալ իրենց տեսակետները:

«Ընդգծվել է հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացի կարեւորությունը՝ նպաստելով դրան առաջին հերթին տարածաշրջանային ձեւաչափերի շրջանակներում», - նշվում է հրապարակման մեջ:

Անդրկովկասյան թեմայից բացի, քննարկվել է նաեւ ուկրաինական ճգնաժամի թեման՝ներառյալ դրա քաղաքական եւ դիվանագիտական կարգավորման հեռանկարները:

Գնահատականներ են տրվել Կենտրոնական Ասիայի երկրների հետ փոխգործակցության վերաբերյալ, ինչպես նաեւ քննարկվել են ռուս-թուրքական օրակարգի արդիական թեմաները:

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԹՇՆԱՄԱՆՔ՝ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում իրականացվող քրեական վարույթով ՀՀ ազգային անվտանգության ծառայության եւ ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողների հետ ակտիվ եւ արդյունավետ համագործակցությամբ իրականացված հսկայածավալ քննչական ու գաղտնի քննչական գործողությունների եւ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել են Երեւան քաղաքում 2024թ. փետրվարին կազմակերպված ահաբեկչության երկու դեպքերը:



Նախաքննությամբ փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ՀՀ քաղաքացի Գ.Ս.-ն եւ նախաքննությամբ դեռեւս չպարզված անձինք, ունենալով հակաիշխանական հայացքներ, Հայաստանում գործող իշխանության հետ ունենալով գաղափարական թշնամանք, կազմակերպել են 2024 թվականի փետրվարի 10-ին Երեւան քաղաքի Նոյ թաղամասի 143/1 հասցեում, իսկ 2024 թվականի փետրվարի 20-ին՝ Գյուլբենկյան 30/3 եւ Գյուլբենկյան 33 հասցեներում ահաբեկչությունների կատարում:

Այսպես, Գ.Ս.-ն բնակչությանն ահաբեկելու, հանրային իշխանության մարմինների գործունեությունը կազմալուծելու, հանրային իշխանության ներկայացուցիչ եւ հանրային ծառայող, ՀՀ ազգային ժողովի պատգամավոր, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Գուրգեն Մելքոնյանին քաղաքական կոնկրետ հայտարարություններից ու դիրքորոշումներից ձեռնպահ մնալուն հարկադրելու եւ այդպիսով հանրային իշխանության մարմիններին ներքին եւ արտաքին քաղաքականության հետ կապված հարցերի կոնկրետ լուծումներից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կազմակերպել է Ա.Գ.-ի եւ Է.Պ.-ի կողմից ահաբեկչություն, այն է՝ Գուրգեն Մելքոնյանի բնակության վայրի հարակից տարածքի քաղաքացիական անձանց կյանքից զրկելու, նրանց առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու վտանգով, ինչպես նաեւ խոշոր չափերի գույքային վնաս պատճառելով զուգորդված պայթյուն կատարելը:

Գործելով նույն դիտավորությամբ՝ Ա.Գ.-ն, Է.Պ.-ի հետ նախապես քննարկելով կատարվելիք գործողության մանրամասները, 2024 թվականի փետրվարի 10-ին իր բնակության վայրում նրան է փոխանցել նախապես պատրաստված, փշրտող գործողության տրոտիլ տեսակի պայթուցիկ նյութով լիցքավորված ինքնաշեն պայթեցման սարքը եւ այն գործարկման վիճակի բերելու համար անհրաժեշտ մարտկոց, բացատրել վերջինը պայթուցիկ սարքի մեջ տեղադրելու եղանակը: Դրանից հետո վերջիններս, կիրառելով քողարկման ու չբացահայտվելու համար անհրաժեշտ որոշակի միջոցներ, ուղեւորվել են դեպի Երեւան քաղաքի Նոյ թաղամասի նախապես որոշված հասցե, որտեղ Է.Պ.-ն, կարծելով, թե Երեւան քաղաքի Նոյ թաղամասի 143/1 հասցեում գտնվող առանձնատունը պատկանում է Գուրգեն Մելքոնյանին, Ա.Գ.-ի կողմից իրեն փոխանցված՝ ավերածություններ գործելու համար պիտանի պայթեցման սարքը պարսպի վրայից նետել է դեպի հիշյալ առանձնատան աջ անկյունային հատվածը: Նույն օրը՝ ժամը 04:30:02-ին, տեղի է ունեցել նշված պայթեցման սարքի պայթյունը, որը զուգորդվել է քաղաքացիական անձանց կյանքից զրկելու, նրանց առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու իրական վտանգով եւ առանձնատան սեփականատեր Ա.Բ.-ին պատճառել է առնվազն խոշոր չափերի գույքային վնաս:

Բացի այդ, Վ.Հ.-ն, Գ.Ս.-ի եւ նախաքննությամբ դեռեւս չպարզված անձանց կազմակերպմամբ, բնակչությանը, ինչպես նաեւ դրա առանձին խմբին, մասնավորապես՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներին, նրանց աջակիցներին ահաբեկելու, հանրային իշխանության գործունեությունը կազմալուծելու, հանրային իշխանության մարմիններին, այդ թվում՝ հանրային իշխանության ներկայացուցիչ եւ հանրային ծառայող, ՀՀ ազգային ժողովի պատգամավոր, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ, «Միավորված աշխատանքային կուսակցության» հիմնադիր ղեկավար Գուրգեն Արսենյանին իրենց համար անընդունելի քաղաքականություն վարելուց եւ քաղաքական դիրքորոշումներ պահպանելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու դիտավորությամբ 2024 թվականի փետրվարի 20-ին, կիրառելով քողարկման եւ չբացահայտվելու համար անհրաժեշտ որոշակի միջոցներ, գնացել է Երեւան քաղաքի Գյուլբենկյան 33 հասցեում գտնվող «Միավորված աշխատանքային կուսակցության» գրասենյակի մոտ եւ ժամը 03:50-ին գրասենյակից 9 մետր հեռավորության վրա գտնվող մայթեզրի ծառի տակ տեղադրել է նախապես պատրաստված, որպես պայթեցման միջոց շուրջ 1 կիլոգրամ տրոտիլ եւ պենտալիտ, իսկ որպես խոցման միջոց՝ հեղյուսներ եւ մանեկներ պարունակող, ավերածություններ գործելու, մարդկանց կյանքից զրկելու, շրջակա շինություններն ամբողջությամբ ավերելու համար պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը:

Ապա նույն ժամանակահատվածում իր մոտ գտնվող՝ որպես խոցման էլեմենտներ՝ մանեկներ, իսկ որպես պայթուցիկ նյութ՝ անծուխ վառոդ պարունակող, մարդկանց կյանքից զրկելու, գույք վնասելու եւ ոչնչացնելու համար պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը տեղադրել է Գյուլբենկյան 30/3 հասցեում գտնվող՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տարածքային գրասենյակի մուտքի մոտ՝ այդկերպ առաջացնելով պայթյունի եւ հրկիզման իրական սպառնալիք՝ զուգորդված քաղաքացիական անձանց կյանքից զրկելու, նրանց առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու եւ այլ ծանր հետեւանքներ առաջացնելու վտանգով: Վ.Հ.-ի կողմից տեղադրված պայթեցման սարքերը չեն պայթել, եւ նշված հետեւանքները վրա չեն հասել պատահականությամբ՝ ինքնաշեն պայթեցման սարքերի գործարկման մեխանիզմը հաշվարկված եղանակով չգործելու պատճառով:

Նշված արարքները կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով, այդ թվում՝ ահաբեկչություն կատարելու համար, քրեական հետապնդում է հարուցվել 4 անձի նկատմամբ: Նրանցից երկուսի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, իսկ մյուս երկուսը ձերբակալված են:

Նախաքննությունը շարունակվում է:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր՝ ՔՊ պատգամավոր Գագիկ Մելքոնյանի տան բակ պայթուցիկ նետողները իրավապահներին ասել էին, որ դա արել են սթափեցնելու համար:

ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐ

ՄԱՅՐԸ ԽՆԴՐԵԼ Է՝ ՈՒՇԱԴԻՐ ԼԻՆԵՆ

Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջի 17-ամյա տղային կյանքից զրկելուց առաջ մայրը զանգահարել է դասղեկին եւ խնդրել՝ ուշադիր լինեն, խնդիր կա, սակայն այլ մանրամասներ չի հայտնել: ArmLur.am-ի նկարահանող խումբը Եեւնի ինֆորմատիկայի պետական քոլեջում էր: Զրուցել ենք քոլեջի տնօրենի, սպանված աշակերտի դասղեկ Լիլիթ Համբարձումյանի հետ, որը անձամբ է տղային գտել դանակահարված, խոսեցինք նաեւ սննդի կետի աշխատակիցների հետ:

Նշենք, որ ըստ Քննչական կոմիտեի՝ նախնական տվյալներով՝ տուժողի եւ ենթադրյալ հանցագործություն կատարած անձի միջեւ անձնական հարցի շուրջ տեւական ժամանակ անհամաձայնություն եւ անբարյացակամ հարաբերություններ են ձեւավորվել, ինչի կապակցությամբ երիտասարդների միջեւ մի քանի վիճաբանություն է տեղի ունեցել, որոնցից մեկի ժամանակ 21-ամյա երիտասարդը, որին երեկ են հայտնաբերել իրավապահները Սիսիան քաղաքում, վնասել է սպանվածի վարած, վերջինիս հորը պատկանող ավտոմեքենան:

Դեպքից մի քանի օր առաջ կրկին վիճաբանություն է տեղի ունեցել երիտասարդների միջեւ, որի ժամանակ 17-ամյա երիտասարդը հայհոյել է 21-ամյա երիտասարդին, որը, ի պատասխան, վերջինիս սպառնացել է հաշվեհարդար տեսնել:

2024 թվականի մարտի 12-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, 17-ամյա երիտասարդն ընկերոջ հետ գտնվել է քոլեջին հարող տարածքում գործող սննդի կետի մոտ, երբ 6-7 երիտասարդներ, այդ թվում՝ 21-ամյա երիտասարդը, վազել են տուժողի ուղղությամբ: Նշված անձանցից մեկի ձեռքում փայտե մահակ է եղել, իսկ 21-ամյա երիտասարդի ձեռքին՝ դանակ: Երիտասարդների միջեւ կրկին վիճաբանություն է սկսվել, որի ժամանակ 21-ամյա երիտասարդը դանակով մի քանի անգամ հարվածել է 17-ամյա երիտասարդի մարմնի տարբեր հատվածներին, ինչի հետեւանքով նա վայր է ընկել, որից հետո տղաները գետնին ընկած վիճակում շարունակել են ոտքերով հարվածներ հասցնել երիտասարդի մարմնին, իսկ 21-ամյա երիտասարդը դանակով հարվածել է նրան: Հավաքված անձանց միջամտության արդյունքում վիճաբանությունը դադարել է: Իրավապահները հայտնաբերել են դանակահարողին եւ նրա հետ քոլեջի տարածքում տղային մահակներով ծեծի ենթարկած մյուս ենթադրյալ հանցագործներին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 13-ից 14-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 102 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՏՐԱՆՍՊՈՐՏ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ

Դիլիջան համայնքի Աղավնավանք գյուղում բնակվում են 1988-1990 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած մեր հայրենակիցները: Գեղատեսիլ գյուղի բնակիչների թիվը 387 է: Աղավնավանքցիները Տավուշի մարզկենտրոն Իջեւան մեկնում ու վերադառնում են Երեւան-Իջեւան եւ հակառակ ուղղությամբ ընթացող հասարակական տրանսպորտով՝ «Գազել» մակնիշի միկրոավտոբուսներով, եթե դրանցում ազատ տեղ է լինում: Մարզկենտրոն մեկնելիս ու այնտեղից վերադառնալիս Աղավնավանքի բնակիչները հարկադրված կանգառ են ունենում միջպետական ավտոճանապարհի եզրին՝ այդ ավտոճանապարհից դեպի Ճամբարակ՝ Աղավնավանք տանող ճանապարհի խաչմերուկում: Դա բավական դժվարություններ է ստեղծում բնակիչների համար: Աղավնավանքի բնակիչները հայտնեցին, որ իրենց գյուղը Դիլիջան քաղաքի հետ կապող հասարակական տրանսպորտ չկա, իրենք Դիլիջան ստիպված տաքսիով են գնում՝ մի ուղղության համար վճարելով 3-4 հազար դրամ: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքի «Դիլիջանի հասարակական տրանսպորտ» բաժնում գրված է. ««Հաջորդ կանգառը՝ Եվրոպա» ԵՄ ծրագրի շրջանակներում ստեղծվեց Դիլիջանի հասարակական տրանսպորտի նոր համակարգ: 2016թ. ապրիլից համայնքների խոշորացման արդյունքում Դիլիջան քաղաքային համայնքը միավորվեց Հաղարծին, Թեղուտ, Հովք, Գոշ, Խաչարձան եւ Աղավնավանք գյուղական համայնքների հետ: Դիլիջանի համայնքապետարանը Իտալիայի Տոսկանայի «Չիսպել» հանրային տրանսպորտային ասոցիացիայի հետ Եվրոմիության կողմից ֆինանսավորած ծրագրի շրջանակներում ստեղծեց որակապես նոր՝ «Դիլիջանի հասարակական տրանսպորտային համակարգ»: Ծրագրի իրականացումը միտված էր միջհամայնքային տեղաշարժի դյուրինացմանը»: Աղավնավանքը համայնքի կենտրոն Դիլիջանին կապող հասարակական տրանսպորտ չի գործում. այդպե՞ս են դյուրացրել միջհամայնքային տեղաշարժը:

ՆՈՐՈԳՈՒՄԸ ՉԵՆ ԱՎԱՐՏԵԼ

2022 թվականին Դիլիջան քաղաքում սկսվեց Երեւանի Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործությունների կենտրոնի Դիլիջանի մասնաճյուղի՝ ժողովրդական արվեստի թանգարանի շենքի հիմնանորոգումը: Թանգարանի շենքը վատթար վիճակում էր գտնվում, հիմնանորոգման կարիք ուներ: Ճարտարապետական այդ կառույցը զբոսաշրջային Դիլիջանի հարուստ պատմության վառ վկաներից է: ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Հովհաննես (Վանիկ) Շարամբեյանը իր տունը նվիրել է քաղաքին, 1979թ.-ին այն դարձրել է թանգարան: Այդ շենքը նախկինում պատկանել է իշխանուհի Մարիամ Թումանյանին: Ծրագրով նախատեսված էր՝ թանգարանի շենքի նորոգումը կավարտվի 2023 թվականի ընթացքում, սակայն հիմա վերանորոգման գործը չի ավարտվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱԺ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ

ԿԱՆԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Մարտի 14-ին Ազգային ժողով են այցելել «Կատարինե» կանանց քաղաքական առաջնորդության ծրագրի շրջանավարտները: Նրանց հետ հանդիպել եւ հասարակական-քաղաքական կյանքում կանանց ներգրավվածության հարցերի մասին զրուցել է ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը: Հանդիպմանը մասնակցել են «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Արուսյակ Ջուլհակյանը, Սոնա Ղազարյանը, Ծովինար Վարդանյանը, Ալխաս Ղազարյանն ու Մարիամ Պողոսյանը:

Ողջունելով հյուրերին՝ ՀՀ ԱԺ փոխնախագահը հատկանշական է համարել այն հանգամանքը, որ հանդիպումը կայանում է կանանց միամսյակի շրջանակում: Անդրադառնալով «Կատարինե» կանանց քաղաքական առաջնորդության ծրագրի արդյունավետությանը՝Հակոբ Արշակյանը համոզմունք է հայտնել, որ նախաձեռնությունը համախմբում է տարբեր ոլորտներում նախաձեռնող, փորձառու եւ ուժեղ կանանց՝ զարգացնելու հաջողակ քաղաքական կարիերայի եւ առաջնորդության համար անհրաժեշտ հմտություններ: Այս համատեքստում նա ընդգծել է ծրագրում հատկապես մարզերի կանանց մասնակցությունը:

ԱԺ փոխնախագահը խոսել է անհատի կայանալու ճանապարհին կանանց վճռորոշ դերակատարության մասին եւ հավելել՝ կանայք առաջնորդության հարցում կարող են լինել լավագույնը եւ չպետք է թերագնահատել նրանց դերը: Հակոբ Արշակյանի համոզմամբ՝կանանց առաջնորդության համար ավելի մեծ հնարավորություններ պետք է ստեղծվեն:

Հարցուպատասխանի ընթացքում պատգամավորներն ու քննարկման մասնակիցներն անդրադարձել են քաղաքական կյանքում կանանց ներկայացվածությանը, կանանց իրավունքների իրացմանը մի շարք բնագավառներում: Կարեւորվել է կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում, հատկապես՝ տեղական մակարդակում: Նշվել է, որ գործող քվոտան ներուժ ունեցող կանանց ներգրավվելու հնարավորություն է տալիս, սակայն համայնքներում առկա են բազմաթիվ կարծրատիպեր: Ընդգծվել է որոշումներ ընդունող մարմիններում կանանց մասնակցությունը բարելավող մեխանիզմների անհրաժեշտությունը: Խոսվել է կանանց զբաղվածությունը խթանող ծրագրերի մասին:

«Կատարինե» կանանց քաղաքական առաջնորդության ծրագիրը ոգեշնչված է Կատարինե Ջալյան Մանուկյանի կերպարով, որը 1919 թվականին եղել է առաջին հայ կին պատգամավորներից մեկը: Ծրագիրն իրականացվում է Ազգային ժողովրդավարության ինստիտուտի (ԱԺԻ/NDI) կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Հանդիպման ավարտին հյուրերը շրջել են ԱԺ շենքում, եղել նիստերի դահլիճում, թանգարանում եւ գրադարանում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«ՄԵՆՔ ԱՎԵԼ ԲԱՆ ՉԵՆՔ ՈՒԶՈՒՄ»

Մարտի 20-ին Ազատության հրապարակում արցախցիները ցանկանում են իրականացնել հնարահավաք:

Հավաքի նպատակն է քննարկել ու բարձրաձայնել Արցախի ժողովրդի լայն շրջանակների առաջարկներն ու պահանջները ՀՀ կառավարության կողմից քննարկվող՝ Արցախի ժողովրդի բնակարանային կարիքների ապահովման, բնակավարձի համար աջակցության ծրագրերի նախագծերի եւ այլ առնչվող ծրագրերի վերաբերյալ:

Արցախի նախագահի աշխատակազմի ղեկավար Արտակ Բեգլարյանն իր ֆեյսբուքյան էջում գրել է, որ հանրահավաքի մասին իրազեկվել է Երեւանի քաղաքապետարանը, որը նրանց կողմից ընդունվել է՝որպես ի գիտություն:

Ar2Lur.a2-ը կապ հաստատեց արցախցու հետ, որը ցանկանում է մասնակցել հանրահավաքին՝ հասկանալու համար՝ ինչ ակնկալիքներ ունեն հանրահավաքից. «Ես կարծում եմ, որ ինչ-որ բան կփոխվի էլի, որովհետեւ էսպես էլ հնարավոր չի ապրել: Տասնյակ հազարավոր արցախցիներ մինչեւ էսօր աշխատանք չեն կարողանում գտնել, հենց մեկը ես 1 տեղ զոռով աշխատում եմ, էդ տված 40+ 10.000 դրամով հազիվ եմ տան վարձ տալիս. մենք անգամ չենք գոյատեւում, ուր մնաց ապրել»:

Անդրադառնալով այն որոշմանը որի համաձայն՝ յուրաքանչյուր արցախցու 3 միլիոն դրամ է հատկացվելու բնակարան գնելու կամ տուն կառուցելու համար, ասաց, որ հնարավոր չէ այդ գումարով որեւէ բան անել:

«Հենց մեկը ես մենակ եմ, 3 միլիոնով ի՞նչ կարող եմ գնել: Օգնություններն էլ, ինչ օգնություն լինում է, մարդիկ են օգնում, լիքը տեղեր եմ գրանցվել, բայց մի կիլո բրինձ անգամ չեմ ստացել:

Արցախցին, որ մի սունկայով եկել հասել է ստեղ, ի՞նչ կարա անի: Ես հլը մի հոգով եմ, բա են մարդիկ ի՞նչ ասեն, որ երեխայի հետ են, մեծ ընտանիք են, ինչպե՞ս ապրեն էդ մարդիկ: Մենք ավել բան չենք ուզում, ուղղակի էն, ինչ հասնում է փախստականին»,- հավելեց արցախցին:

ԳՈՒՅՔԸ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ

ՀՀ կառավարության մարտի 14-ի նիստի օրակարգի 14-րդ կետը գույքի նվիրատվությունն ընդունելու, գույք ամրացնելու եւ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին է:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը գրությամբ դիմել է Պետական գույքի կառավարման կոմիտե եւ ներկայացրել Մարտունի համայնքի ավագանու որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի 2-րդ փողոց թիվ 20 հասցեում գտնվող 1.2554 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը, նրա վրա կառուցված դպրոցը, կաթսայատունը եւ պարիսպը Հայաստանի Հանրապետությանը նվիրատվությամբ հանձնելու համաձայնություն տալու մասին»: Առաջարկվում է ՀՀ Գեղարքունիքի մարզ համայնք Մարտունի գյուղ Վաղաշեն 2-րդ փողոց 20 դպրոց հասցեում գտնվող, 5 033.64 քառ. մետր մակերեսով շենք-շինությունները, ինչպես նաեւ դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 1.2554 հեկտար մակերեսով հողամասը նվիրատվության կարգով փոխանցել Հայաստանի Հանրապետությանը:

Հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու կողմից կայացված որոշումը՝ մշակվել է «Գույքի նվիրատվությունն ընդունելու եւ գույք ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, համաձայն որի՝ նախատեսվում է ընդունել նվիրատվությունը Հայաստանի Հանրապետությանը եւ գույքն ամրացնել կոմիտեին:

Նյութերը՝ ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 1 մարդ զոհվել, 14-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային հարթակներով փոխադրման ծառայությունների (առցանց տաքսի) մատուցման ոլորտը՝ դիտարկելով «Թեթեւ մարդատար ավտոմեքենաներով ուղեւորափոխադրման ծառայությունների պատվերների գրանցման, փոխանցման եւ ուղեւորափոխադրման ծառայությունների կազմակերպման ծառայություն» ապրանքային շուկան:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ էլեկտրոնային հարթակների արագ զարգացումը զգալիորեն դուրս է մղել շուկայից ավանդական տաքսի ծառայություններին: Գրանցված 3162 կազմակերպություններից 2787-ը 2018-2023 թթ. այս ոլորտում որեւէ գործունեություն չի իրականացրել, մնացածների վճարած հարկերը զգալի անկում են ապրել:

Ներկայումս օրենսդրորեն սահմանված չեն էլեկտրոնային հարթակներով փոխադրման ծառայությունների վերահսկման եւ կարգավորման մեխանիզմներ՝ կապված ծառայությունների որակի կամ հարթակների պատասխանատվության հետ:

Հարթակներում ուղեւորափոխադրման հիմնական տեսակների մասին տեղեկատվությունը լիարժեքորեն ներկայացված չէ: Մյուս կողմից՝ հարթակների գաղտնիության քաղաքականությունը թույլ է տալիս օգտագործել օգտատերերի մասին տեղեկատվությունը բավականին լայն շրջանակի նպատակների համար:

Դիտարկված ապրանքային շուկայում կենտրոնացվածությունը շարունակում է աճել. գերիշխող դիրք ունեցող տնտեսավարողի մասնաբաժինը 2021-2023 թթ. ավելացել է:

Առաջարկներ

Սահմանել «էլեկտրոնային հարթակ» հասկացությունը նաեւ նման հարթակներով բեռնափոխադրման մասով եւ տրանսպորտի ոլորտի կարգավորման դաշտի լայնացման միջոցով դիտարկել հարթակի միջոցով մատուցվող ծառայությունների համար հարթակի սեփականատիրոջ պատասխանատվության շրջանակը, հարթակի աշխատանքի մեխանիզմն ու նման հարթակների հետ վարորդների եւ տաքսի ծառայություն մատուցող ընկերությունների փոխգործակցության կարգավորման հարցերը: Այս համատեքստում արդյունավետ կարող է լինել նաեւ վարորդների եւ ընկերությունների ռեեստրների ստեղծումը, ինչը կօգնի վերահսկել ծառայություն մատուցող վարորդների լիցենզավորված լինելու հանգամանքը եւ զգալիորեն կբարելավի ուղեւորափոխադրման ծառայությունների որակը:

Թե՛ հարթակում տեղեկատվության ներկայացման, թե՛ սպառողներից հավաքագրված տեղեկատվության օգտագործման վերաբերյալ պետք է լինեն հստակ սահմանված կանոններ, որոնք թույլ կտան սպառողներին հիմնավորված որոշումներ կայացնել, միաժամանակ արդյունավետորեն կպաշտպանեն նրանց մասին հավաքագրված տեղեկատվության օգտագործման չարաշահումներից:

ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ՉՈՒՆԻ

«Գերիների հնարավոր վերադարձի համար արվում է ամենօրյա աշխատանք»,- խորհրդարանում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ ասել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ArmLur.am-ը կապ հաստատեց իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչ է արվում ռազմագերիների համար, եւ ինչ փոփոխություններ կան. «Այստեղ իրավական մասով դատական գործընթաց կա, որոնք շատ կարեւոր զսպող մեխանիզմներ են քաղաքական գործընթացների համար եւ անխուսափելի ազդեցություն ունեն, եւ դատական ակտերը այս պահին վերջնական ավարտված չեն, իսկ ընթացող գործընթացը դրական ազդեցություն է թողնում քաղաքական գործընթացների վրա: Քաղաքական մասով մեզ համար հստակ է, որ ազատ արձակումը ուղիղ կապված է քաղաքական պահանջների բավարարման հետ, եւ առանց որոշակի պահանջների բավարարման, Ադրբեջանը չի իրականացնում իր միջազգային պարտավորությունները կամ այն հանձնառությունները, որոնք ամրագրված են իրավաքաղաքական փաստաթղթերում, եւ առանց հայկական կողմի զիջումների, մեծ հաշվով, հայրենադարձում տեղի չի ունենում, եւ հայկական կողմը, կարծես թե, ընդունել է խաղի այս կանոնները, որ ազատ արձակումը պետք է ապահովվի զիջումների վրա, եւ ինքնուրույն լծակներ չի գործադրում միակողմանի մարդասիրական պարտավորությունների կատարումը երաշխավորելու նպատակով»: Սիրանուշ Սահակյանի խոսքով՝ Հայաստանը հիմա ակնկալիքներ չունի՝ կարճաժամկետ հեռանկարում ռազմագերիների ազատ արձակում կլինի: Ազատ արձակումը կապված է լինելու խաղաղության պայմանագրի դրույթների համաձայնացման եւ կնքման հետ: «Թերեւս 2023 թվականի ռազմագերիների ազատ արձակումը կարող է տեղի ունենալ, բայց ինչ վերաբերում է բարձրաստիճան պաշտոնյաներին, ինչպես նաեւ այն անձանց, ում ծանրագույն մեղադրանքներ են ներկայացրել, այդ թվում՝ խոշտանգումների, վարձկանության մասով, ապա նրանց հայրենադարձումը, մեծ հաշվով, իրատեսական է, երբ խաղաղության Ադրբեջանի ընդունելի պայմանները կթելադրվեն, եւ փաստաթղթեր կթելադրվի: Մենք ուղիղ կապակցում ենք տեսնում խաղաղության շուրջ գործընթացների հետ, եւ մինչեւ այդ գործընթացների եզրափակումը իրատեսական չենք համարում այս թիմի հայրենադարձումը»,-ասում է իրավապաշտպանը: Նրա կարծիքով՝ Ադրբեջանի պահանջը, ըստ որի՝ Հայաստանը պետք է հետ վերցներ հայցերը միջազգային կառույցներից, չի նպաստի գերիների վերադարձման գործընթացին, որովհետեւ Հայաստանը շատ լուրջ երաշխիքներ պետք է ունենա, որպեսզի այդ փաստաթղթերի ստորագրումից հետո հրաժարվի հայցերից: «Ադրբեջանը միանշանակ խախտել եւ խախտում է իր պայմանավորվածությունները՝ դրանք լինեն քաղաքական մակարդակում, թե միջազգային իրավական փաստատթղթերում»,- հավելում է իրավապաշտպանը:

Հիշեցնենք, որ հայկական կողմի տվյալներով՝ Ադրբեջանում 54 հայ գերի կա. նրանցից 16-ը գերեվարվել են սեպտեմբերի 19-ի պատերազմից հետո, եւ նրանց թվում են արցախցի նախկին ու ներկա բարձրաստիճան պաշտոնյաներ, զինվորականներ:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Արարատի մարզ, համայնք Արգավանդ, Կենտրոնական փողոց, 24 հասցեում գտնվող 160,56 ք.մ. բնակելի տուն, 46,95 քմ դալան, 140,59 քմ ավտոտեւ 0,104169 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 58470000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 01.04.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետ?? յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 01.05.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ-100

«ՆՌԱՆ ԳՈՒՅՆԸ»՝ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԲԵՄՈՒՄ

Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում երեւանյան բեմում կլինի «Նռան գույնը» հայ-ֆրանսիական ղարային բեմադրությունը, որն արդեն ներկայացվել է Ֆրանսիայում:

Մարտի 14-ին լրագրողների հետ հանդիպմանը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանն ասաց՝ ներկայացման իրագործումը հայ-ֆրանսիական վաղեմի բարեկամության արդյունքն է:

Խոսելով Փարաջանովին նվիրված նախաձեռնությունների մասին՝ փոխնախարարը հիշեցրեց, որ միջոցառումները մեկնարկել են կինոռեժիսորի ծննդյան օրը՝ հունվարի 9-ին. անդրադարձել են Փարաջանովի կինոարվեստին եւ շարունակելու են նրա ժառանգությունը հանրահռչակել արվեստի տարբեր ժանրերում:

«Ֆրանսիայում տարին մեկնարկեց «Նռան գույնը» ներկայացմամբ, որի բովանդակության հիմքում Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմն է, գաղափարի հեղինակը Սաթէ Խաչատրյանն է, իսկ խորեոգրաֆը՝ Մուրադ Մերզուկին: Փարաջանովը մեծ ժառանգություն է թողել, սակայն շատերը ծանոթ են նրա միայն «Նռան գույնը» ֆիլմին, կոլաժներին: Ըստ իս՝ այս ներկայացմամբ կպատասխանենք այն հարցին, թե ով է Փարաջանովը երիտասարդ սերնդի համար», - շեշտեց Դանիելյանն ու հավելեց՝ ներկայացումը՝ Փարաջանովի կատարած աշխատանքի, նրա էության, կյանքի ներշնչանքի դրսեւորումն է՝ օտարի աչքերով:

Երեւանի քաղաքապետարանի մշակույթի եւ տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանի խոսքով՝ կարեւորել են այն, որ ներկայացումը բեմադրել է օտարազգին:

«Երբ ապրում ես Ֆրանսիայում, անում ես բեմադրություն հայերի ու ֆրանսիացիների հետ, ակամայից Հայաստանի մշակույթը տանում ու ներկայացնում, տարածում ես քո երկրում: Մշակույթը ոչ միայն արձանագրվում է գրքերում, պատմության մեջ, այլեւ մարդկանց միջոցով, որոնք ապրում են, արարում են», - շեշտեց Սարգսյանն ու ընդգծեց՝ դա հաշվի առնելով են ֆինանսական աջակցություն ցույց տվել նախաձեռնությանը:

«Նռան գույնը» ներկայացման նախապատրաստական աշխատանքները սկսվել են 2022 թվականի հուլիսից Ֆրանսիայում: Այդ նպատակով Հայաստան են ժամանել ներկայացման խորեոգրաֆ Մուրադ Մերզուկին, բեմանկարիչ Բենժաման Լըբրըտոնը, «Տոբոգան» եւ «Գասկոն» ֆրանսիական թատրոնների տնօրենները, ինչպես նաեւ ներկայացման դրամատուրգիական կոնցեպտի հեղինակ Սաթէ Խաչատրյանը:

Ներկայացման երաժշտությունը գրել եւ ձայնագրել է «Հող» խումբը, իսկ բեմադրության հագուստների ձեւավորման հեղինակը Էդգար Մանուկյանն է:

Սաթէ Խաչատրյանի հավաստիացմամբ՝ Փարաջանովի արվեստն ավելի հասանելի դարձնելու համար ընտրել են պարի լեզուն: Որոշել են համագործակցել Մուրադ Մերզուկիի հետ, քանի որ նա տաղանդավոր է, ճանաչված ոչ միայն Ֆրանսիայում. բազմաթիվ բեմադրություններ է իրականացրել Ֆրանսիայից դուրս:

«Ինձ համար կարեւոր էր տեսնել, թե ինչպես են այլ մշակույթի կրողներն ընկալում մեր մշակույթն ու այն մատուցում: Երբ խոսում ենք Փարաջանովի մասին, հիշում ենք ազատության, համարձակության, երկխոսության մասին: Մեր նախագիծն այս երեք բառերի ամփոփումն է, որ լավագույնս ներկայացնում է Սերգեյ Փարաջանովին»,-շեշտեց նախագծի գաղափարի հեղինակն ու տեղեկացրեց՝ ներկայացման մեջ զբաղված են եւ՛ հայ, եւ՛ ֆրանսիացի պարողներ:

Մուրադ Մերզուկին հայկական ժողովրդական պարը համադրել է հիփ-հոփի, ժամանակակից պարի հետ: Նա խոստովանեց՝ հուզված է, քանի որ իրեն շատ հետաքրքիր է, թե ինչպես Հայաստանի հանդիսատեսը կարձագանքի ներկայացմանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹԵՆԻՍԸ՝ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

Հայաստանի թենիսի պատանեկան հավաքականի անդամներ Առնո Ավետիսյանն ու Խաչատուր Ավետիսյանը երկրորդ տեղն են զբաղեցրել Թուրքիայի Անթալիա քաղաքում անցկացված Եվրոպայի մինչեւ 14 տարեկանների զարգացման առաջնության զուգախաղի մրցումներում: Նույն տարիքային խմբում Մարիա Ազիզյանն ու Գայանե Բզնունին զուգախաղում հասել են մինչեւ կիսաեզրափակիչ, որտեղ սակայն պարտություն են կրել: Հայ պատանի թենիսիստներն առաջնությանը մասնակցել են մարզիչ Միքայել Ավետիսյանի գլխավորությամբ: Մ12 տարեկանների միջազգային մրցաշարում էլ կիսաեզրափակիչ է հասել Սամվել Գեւորգյանը: Մրցաշարերին մասնակցել են նաեւ Ալբանիայի, Բոսնիա եւ Հերցեգովինայի, Բուլղարիայի, Վրաստանի, Հյուսիսային Մակեդոնիայի, Մոլդովայի, Չեռնոգորիայի, Թուրքիայի եւ այլ երկրների ներկայացուցիչներ: Մարտի 11-23-ը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում անցկացվում է Թենիսի միջազգային ֆեդերացիայի՝ մինչեւ 18 տարեկան տղաների եւ աղջիկների միջեւ վարկանիշային մրցաշար, որին 28 երկրի ավելի քան 100 թենիսիստ է մասնակցում:

ՀԱՅՏՆԻ Է ԿԱԶՄԸ

Հայաստանի մարմնամարզության մեծահասակների եւ երիտասարդական հավաքականների կազմը, որով թիմերը կմասնակցեն Եվրոպայի առաջնություններին, հայտնի է: Հայաստանի մարմնամարզության հավաքականը Եվրոպայի առաջնությանը կմասնակցի հետեւյալ կազմով՝ Արթուր Դավթյան, Վահագն Դավթյան, Հարություն Մերդինյան, Արթուր Ավետիսյան, Գագիկ Խաչիկյան եւ Էրիկ Բաղդասարյան: Երիտասարդների Եվրոպայի առաջնությանը կմասնակցեն Համլետ Մանուկյանը, Մամիկոն Խաչատրյանը, Ռոբերտ Գյուլումյանը եւ Շեքսպիր Գեւորգյանը: Մարմնամարզության Եվրոպայի առաջնությունը կկայանա Իտալիայում ապրիլի 24-28-ը:

ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակչի վերջին երկու մասնակիցները հայտնի են:

Մադրիդի «Ատլետիկո»-ն, սեփական հարկի տակ հյուրընկալելով «Ինտեր»-ին, կարողացավ հաղթանակի հասնել հետխաղյա 11-մետրանոց հարվածաշարի շնորհիվ՝ 3:2: Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը «Ինտեր»-ի մեկնարկային կազմում էր, սակայն փոխարինվեց լրացուցիչ ժամանակում:

«Ատլետիկո»-ն շարունակում է պայքարը Չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակչում:

Օրվա մյուս խաղում Դորտմունդի «Բորուսիա»-ն ընդունեց ՊՍՎ-ին եւ հաղթեց 2:0 հաշվով: Գերմանական ակումբի կազմում աչքի ընկան Սանչոն եւ Ռոյսը: «Բորուսիա»-ն Չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակչում է:

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 01.04.2024 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ.-ին:

Աճուրդի կազմակերպիչն է «ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

- Լոտ՝ ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն, Թաիրովի փողոց, 47/1 հասցեում գտնվող 113,8 քմ բնակելի տուն, 20 քմ օժանդակ շինություն, 15,6 քմ հարթակ եւ 0,078317 հա հողամաս,
- Լոտի մեկնարկային գինը՝ 150000000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ,
- Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,
- իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am, www.borsa.am

●Մարտի 16-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Ռապունցելը» մանկապատանեկան ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՎՃԱՐՆԵՐ

ՀԱՐՑ. Աշխատողը նույն գործատուի մոտ միաժամանակ կատարում է եւ՛ աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատանք, եւ՛ քաղաքացիաիրավական պայմանագրով հաստատված աշխատանք: Խնդրում եմ ասել՝ նման դեպքերում ինչպես է հաշվարկվում սոցիալական ապահովության վճարը եւ եկամտահարկը:

Ռուբինա Սիմոնյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ «Եկամտահարկի հաշվարկման եւ բյուջե վճարման կարգի մասին» հրահանգի 23.2-րդ կետի դրույթներով՝ տվյալ ամսում աշխատանքի վարձատրության ու դրան հավասարեցված վճարումների յուրաքանչյուր հաշվարկի եւ այլ եկամուտների (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարվող եկամուտների) յուրաքանչյուր վճարման դեպքում կատարվում է աճողական կարգով հարկվող եկամտի եւ եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով այդ ամսում նշված եկամուտների ընդհանուր գումարից եւ անձնական նվազեցման չափից, ինչպես նաեւ Պարտադիր սոցիալական վճարների հաշվարկման եւ վճարման հրահանգի 9-րդ կետով՝ ՀՀ գործատուներն անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց համար օրենքով սահմանված կարգով պարտավոր են կատարել սոցիալական վճարներ, իսկ ՀՀ անհատ ձեռնարկատերերի եւ նոտարների հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների համար գործատուները սոցիալական վճարներ չեն կատարում:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ առանձին վճարողների եւ գործունեության տեսակների համար օրենքով կարող են սահմանվել եկամտային հարկին փոխարինող հաստատագրված վճարներ կամ արտոնագրային վճարներ:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ բժշկական կազմակերպությունը հիվանդների հոսպիտալիզումն ինչ սկզբունքով է իրականացնում:

Լիաննա Մարգարյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ ամսական կտրվածքով բյուջեի սպառման դեպքում բժշկական կազմակերպությունը հիվանդների հոսպիտալիզացումն իրականացնում է պլանային կարգով, հերթագրման եղանակով, բացառությամբ հետեւյալ ծառայությունների՝

- սոցիալական հատուկ կարեւորություն ունեցող հիվանդությունները,
- շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունները,
- ծննդօգնություն,
- 0-7 տարեկան երեխաների բուժօգնություն,
- անհետաձգելի վիճակների բուժօգնություն:

(Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 9-ի N 291-Ն որոշման, Հավելված N 4, կետ 2):

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ հիվանդների հերթագրման դեպքում բժշկական կազմակերպությունը հիվանդներին ապահովում է անվճար բժշկական եւ դեղորայքային բուժման վերաբերյալ անհրաժեշտ խորհրդատվությամբ: Ի դեպ, հիվանդները մինչեւ հերթագրմամբ բուժօգնություն ստանալու ժամկետը անվճար բուժօգնություն կարող են ստանալ պետական պատվեր իրականացնող այլ հիվանդանոցային բուժհաստատություններում եւ տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Կինը նստել է դռան դիմաց՝ խոչընդոտելու հարկադիր կատարողներին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-4 -7 +4 +9
Կոտայքի լեռներ	-8 -10 +5 +8
Կոտայքի նախալեռներ	-5 -8 +10 +13
Գեղարքունիք	-8 -13 +3 +6
Լոռի	-6 -10 +8 +10
Տավուշ	-4 -7 +8 +11
Արագածոտնի լեռներ	-8 -12 +3 +6
Արագածոտնի նախալեռներ	-5 -7 +8 +11

Արարատ	-4 -7 +11 +13
Արմավիր	-4 -8 +10 +13
Վայոց ձորի լեռներ	-3 -7 +3 +6
Վայոց ձորի նախալեռներ	-3 -7 +10 +13
Սյունիքի հովիտներ	-4 -7 +11 +14
Սյունիքի նախալեռներ	-9 -13 +7 +10
ԼՂՀ	-9 -10 +7 +10
Երեւան	2 -4 +9 +13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.3.2024**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*